3087
3088
3089

271
Ц-99

2000010

# ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

*Առաջին անգամ՝ ներկայացրած է Թիֆլիզի քաղաքային թատրոնում՝ 1863 թուի Հոկտեմբերի 23-ին:*

Дозволено Цензурою. Тифлисъ, 7-го Января 1901 г.

891.99
Ս-94

# Գ Ի Շ Ի Ր Վ Ա Ն

# ՍԱԲՐԸ ԽԷՐ Է

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

*Երկրորդ տպագրութիւն*

*Ո ւ ղ ղ ա ծ*

*Թ Ի Փ Լ Ի Զ*
*Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի,*
*Միքայէլեան փողոց,* № 81.
1901

11448

5-3951-ավ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

**ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ ԻՐԱՍԱԾՕՎ**, *մանդրում ծախող* . . . . ԱՐՏԱՇԷՍ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ †

**ՄԱՐԹԱՑ**, *նրա կնիկը* . . . . Տ. ՇԱՀԻՆԵԱՆՑ

**ԿԵԿԵԼ**, *նրանց ախչիկը* . . . Տ. ՆՈՒԱՐԴ ՆԱԶԱՐԵԱՆՑ

**ԱՐՈՒԹԻՆ ԺԱՐՏԱՐՕՎ**, *բաղաղխանի տղայ* . . . . . . Պ. ՄԱՆԴԻՆԵԱՆՑ

**ՔԻՏԷՍԻ**, *խամ խմէրէլ, Իրասածօվի ծառէն* . . . . . . Պ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

*Անցքը պատահում է Թիփլիզում Իրասածօվի տանը, 1863-ին:*

---

Ա1060-68

ՊԵՏ ԿՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

# ԳԻԺԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԷՐ Է

*Թիֆլիզի հասարակ սենեակ երկու դռներով, որոնցից մէկը ձախ**) *կողմում, իսկ միւսը բեմի խորքում, որ բացվում է դէպի պատշգամբը: Աջ կողմում տախտ, գորգով ու մութաքաներով զարդարած: Ձախ կողմում դիվան, առջեւը սփռոցով ծածկած սեղան, որի վրայ դրած են՝ համրիչ եւ երկու արծաթաջրած աշտանակ հանգած իստակ մոմերով: Մի հայելի եւ քանի մի աթոռներ լրացնում են սենեակի զարդարանքը: Երաժշտների տեղում նստած են սազանդարները, որոնք մինչեւ վարագոյրի բացուիլը ածում, երգում են տեղական եղանակներ: Գիշեր է:*

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԹԱՅ, մենակ: Տախտի վրայ նստած, ձեռքերը ծոցն առած, շփոթուած է խորապէս:

Է՛սէնց բան կուլի իմ մարթն է անո՛ւմ: Աշխարքն իրանց ախչիկը մարթու էրիտ ու իմ խիղճ Կէկէլն էլի մնում է: Քու դուշմանը՝ թէ մէ էրկու տարի էլ էսէնց անց կացաւ, տանը կու քացխի խիղճս: Ի՛նչ անիմ վուր օխտա չիմ կանացի գա իմ իր-ասածի

*) Աջ, ձախ, պէտք է ընդունել հանդիսականների դիրքից նայելով:

մարթումէն: Խան ասում է՝ ինչ ես շտապում. խան ասում է՝ ջեր էտ'ղադա*) փուղ չունիմ: Ով ասիս՝ հազար հազար թումնիր համրրից իր ախչկայ համա, 'ևս **) կի մէ էրկու հարուր էլ չկանացի խոստանա: Օ՜լօս-բօլօս էս մէ ախչիկն ունինք էլի: Իժում ի՞նչ՝ էն ճա՛ր կարած Թաթէլն ասում էր էսօր առուտէհան, թէ շատ լաւ աղայ է, կօսէ, էն Թանաքուտոզինց տղէն. պալատումն է 'ղուլուղ անում, կօսէ. զուրթ է կայինք չունէ, ամա թաքաւուրիմէն լաւ տօնլուղ է վիկալնում, կօսէ. 'ևրիք հարուր թումնով կու չինիմ, կօսէ: Արմ, ինչ մօզօնիմ, վուր իմ մարթուն փափկեցնիմ: Ասում է՝ չէ՛, չէ՛, չէ՛ չէ՛, 'ևս գարդակ չինօվնիկին ախչիկ չիմ տա, կօսէ. թո՛ղ առուտրի աղայ ըլի ու փուղ ունենայ, կօսէ: Փո՛ւղ, փո՛ւղ, գիփ փո՛ւղ. եարար ինչ դառաւ էն անիծած փուղը: Խիղճ իմ Կէկէլ, նրա բօյին աժէ մէ բաժինք, ամա վուր էլի առանց փուղ չէ ըլո՛ւմ... Ը՜մ, վի՛ր նընգնին հիմիկվան տղէրքը, հըմ... Է՜հ, էս չիքիլի սիրտ էլ չունիմ: ([illegible]) Արմ, մէ տեսնիմ, թէ թուխան ինչ է ասում... ([illegible]) Գիշիրվան ճամփով ովոր ջէհէլ տղայ է գալի... մէրաշ ուրա-

*) Ղ տառը մակայկէտով նշանակած ('ղ) պէտք է արտասանել որպէս Թուրքաց ق կամ Վրացոց ყ:

**) Ե տառը մակակէտով նշանակած ('ե) պէտք է արտասանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի վանկը՝ բառի միջում կամ վերջում ձայնաւորից յետոյ. օրինակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, Եսա յի, և այլն:

խացնում է... քա՛, թուխ-թուխ է, ոչոր վուր է... Ո՞վ կուլի էրնէկ. կուլի Թանաքուտողինց աղէն ըլի՞. արա՛, ինձ ո՞վ կու տայ էս բախտը... Քա՛, չուրս կիկօն էլ մէտի. էս ինչ լաւ փալ դուս էկաւ: Տէր Աստուծ, Դո՛ւն դէվէր մալիկ անիս: (Շտապով կանչում է:) Կէկէլ, Կէկէլ, քա՛ Կէկէ՜լ:

Կէչէլը մտնում է ձախ կողմի դռնից:

## ՏԵՍԻԼ Բ

### ՄԱՐԹԱՑ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ

Ի՞նչ է, ինչ իս ուզում, դէդի ջան:

ՄԱՐԹԱՑ

Քա՛, քանի կանչիլ տաս, չիս իմանում:

ԿԷԿԷԼ

Ձեռխս բան ունէի, վա՛, ինչ իս ուզում:

ՄԱՐԹԱՑ

Մէ էս չուրս կիկօն դուս տար բալկօնը, տէս թէ ինչ խօսք կու իմանաս քուչումը:

ԿԷԿԷԼ

Է՛հ, դէդի ջան, դուն ու քու թուխտը. չո՛ւրս տար մէտի լաւ է էլի՞, էլ ինչ իմանամ:

ՄԱՐԹԱՑ

Քա՛, տա՛ր մէ, հէնց ասլիս:

Կէչէլը չորս կողմը նայում է ու շտապով դուրս գնում խորքի դռնից պատշգամբը:

## ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԹԱՑ, *Մենակ:*

Սիրտս գրմփգրմփում է: Ո՛վ Փեթխայինի կամար կատար Աստուծածին, մէ շաբաթ ամեն օր քու սանդրխտներու վրայ օխտն օխտը չէր բոբլիկ վուտով գիվիր ու դէվէր կօնիմ, թաք Դո՛ւն բարեխօսիս իմ Կէկէլի համա:

*Կէչէլը ուրախ-ուրախ ներս է վազում:*

## ՏԵՍԻԼ Դ

### ՄԱՐԹԱՑ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ, *շտապով:*

Էրկու մարթ գնում էին, դէդի ջան, ու մէկն ասաւ՝ թէ մէրաշ հէնց կու քայ, վուր դուն էլ չիմանաս, կօսէ:

ՄԱՐԹԱՑ

Հալա, հէնց ապրիս, դուրթ իս ասո՞ւմ:

ԿԷԿԷԼ

Աստուծ գիդենայ:

ՄԱՐԹԱՑ, *ձեռքերը բարձրացնելով ու աղաչելով:*

Մեռնիմ քու զօրութենին: (*Բարձր:*) Ո՞վ կուլի եարաբ:

ԿԷԿԷԼ, *վերջի խօսքերը լսելով:*

Ո՛վ պիտի ըլի, միր լուածք անող Զուշանը թէ կուլի. մէրաշ գալը նա գիդէ:

ՄԱՐԹԱՅ

Ի՛հ, խո՛ւղիմ նրա գլուխն էլ. ածկիրս ուտիլ ճ նրա համա:

ԿԷԿԷԼ

Բաս ուրիշ ո՞վ պիտի ըլի, դէդի ջան:

ՄԱՐԹԱՅ

Էրնէկ գիդենամ, քիզ ո՛վ է հարցնում, քա՛: (Ոտի ձայն է լսվում: Շտապով ներսը հավաքում է ու պահում:) Յօրէն, մամէն էլ տուն էկաւ. էս կարը մօդ արա ու գնա բանըդ տիս:

*Խորքի դռնից մտնում է Օսկանը, միջահասակ մարդ, դեմքը կլոր, ճերմակ մազերը, մեջ չէ[illegible] կարճ [illegible] բեղեր, մեջը չէ[illegible]:*

## ՏԵՍԱՐԱՆ Ե

### ՆՐԱՆՔ, ՕՍԿԱՆ

ՕՍԿԱՆ, *կապոցը տալով Կէկէլին:*

Կէկէլ, էս տա՛ր կուխնէն, հէնց ապրիս: (*Ձեռքերը տաքացնում է:*) Հըրա՜, էլի թաղա չիքիլա՛յ... (*Ձեռնոցները նետում է խորքի դռան մոտ:*) Տօ՛, հաց ու պանրի պէս իք ուտում, ի՞նչ է:

*Վերարկուն հանում է նույն դռան մոտ ընկած վրան, իսկ Կէկէլը, կարն ու կապոցը վերցրած, դուրս է գնում ձախ դռնից:*

## ՏԵՍԻԼ Զ

### ՕՍԿԱՆ, ՄԱՐԹԱՅ

ՄԱՐԹԱՅ

Ուրիշնիրու պէս դրօշկա ու կալասկա խօմ չիմ ուզում։

ՕՍԿԱՆ, *ծաղրելով։*

Ի՜նչ է ասում... վա՜հ, հիմի էտունք ուզէ... Ափսուս վուր մազով սալօփ էլ չիս ուզում։

ՄԱՐԹԱՅ, *թախտից վեր կենալով և մօտենալով Օսկանին։*

Հանաքը դէնը, Օ՛սկան ջան, ու մէ լաւ բան պիտի ասիմ։

ՕՍԿԱՆ, *առանձին։*

Ջանը վուր ասաւ, թային դժար բան է ուզում ասի։ (*Մարթային։*) Արա՜, ի՞նչ է, Մա՛րթայ ջան։

ՄԱՐԹԱՅ, *առանձին, երեսը խաչ հանելով։*

Տէր Աստուծ։ (*Օսկանին։*) Ախար էս տարի էլ թողնի՞նք խիղճ ախչկան. մի՞խկ չէ՞։

ՕՍԿԱՆ, *առանձին։*

Վուր ասի՛։ (*Մարթային, նստելով թախտի վրայ։*) Հրա՛, էլի սարքեցիր ճիանուրը՜դ... (*Մարթան վերցնում է վառած ճրագով աշտանակը։*) Ջահլէս մի՛ տանի, քու հօրն ողորմի։

ՄԱՐԹԱՅ, *աշտանակը դնելով սեղանի վրայ։*

Հալա մէ ա՛նգած դի, ի՞նչ իմ ասում է՛... (*Գալիս է նստում Օսկանի կողքին և ձեռքը նրա ուսին դնում։*) Էսօր Թամէլն էլի էկաւ էն չինօվնիկի համա, ՚երիք հարուրով կու չինիմ, կօսէ։

ՕՍԿԱՆ, առանձին:

Ի՛րան ավէք տաս շուլս չային: (Մարթային:) Ի՞նչ չինօվնիկ:

ՄԱՐԹԱՅ

Ա՛յ, էն Թանաքուտողինց տղէն:

ՕՍԿԱՆ, տեղից վեր ըռաշկելով և հետըհետէ տաքանալով:

Տօ՛, ձեռը վիկալ, թէ Աստուծ կու սիրիս մէ է՛. 'ես դարդակ չինօվնիկին ախչիկ չիմ տա, չէ. ինչով չիմացար: Էլի մէ ունեւոր տղայ ըլի, հա՛, 'ես էլ մէջը կու լըվլըվամ. թէ չէ՝ 'ես ո՛վ, Թանաքուտողօվն ո՛վ. լաւը վուր ըլի, իմ ախչիկը չի ուզի: Գժվի՛լ իմ վուր 'ես իմ պէտլած Կէկէլին անկին խաղողի ձեռը գցի՛մ:

ՄԱՐԹԱՅ

Դուն էտէնց սաս ու անքախտ էն օրը զուքած ու զարթըրած ման էր գալի:

ՕՍԿԱՆ

Է՛տ է ձիր աճկիրը քօռացնում է... Գանա ովըր չինօվնիկ չէ, քու մտկումը մարթ չէ՞: Տօ, էս քու չինօվնիկները չի՛ն, վուր մէ գրօշի բանի համա մէ արասու թուղթ ու թանաք ին խարար անո՛ւմ: Չէ, քիզ իմ հարցնում՝ էքուց, էլօր, բան է, 'ղուլուղէմէն դուս արին էս քու պարուն Թանաք լըղստողին... իժում խօմ 'ես պիտի պահիմ նրան... (Աջ ձեռքը շարժում է:) Փա՛հ, կու չինվի իմ բանն էլի՞... Օսկան Պետրովիչը դաղէ ու Թանաք խպըշտողն ուտէ. համ էլ ձեռնիրս կցած առչիը 'ղուլուղ ըլիմ անում, միթամ նրա հօր ճուրտն իմ. ու թէ մէ ջգրած վուխտն էլ բան ասի, պիտի վրէս վուտնիրը քարէ քար տայ ու ըրսկվար

ասէ՝ մմլչի, մմլչի, մօխա չինօվնիկ. 'ես էլ ինչ անիմ էն վուխտը, պիտի ասիմ՝ պօժալուստա, մինավատ: Հայդահա՜... Չէ, չէ, 'ես չինօվնիկի հիդ բան չիմ բռնի, ախպէր: 'Ես հէստի փեսայ գուզիմ, վուր նմ ինձ պատիւ տայ, չէ թէ 'ես նրան. ինձ պէս փուղ դադելու ճամփէն գիդենայ, ինձ պահէ: Ուփրօ լաւ չի ըլի՞, վուր փողոցի տղայ ըլի ու փուղ ունենայ, վուր 'ես էլ դօվլըթումը գըլդիդըլուր գա՜մ:

ՄԱՐԹԱՑ

Բաս ինչ անինք, յօրէն տասնուօխտը տարին թամամեցաւ, տասնուութումն է խիղճս:

ՕՍԿԱՆ, նստելով գետնին վրայ:

Վա՜հ, ինչ իս շտապում, դարդակ չինօվնիկին վուր չիմ տալի ախչկաս, աշխըքումը մարթը 'ղըթլուղ է էլի՞:

ՄԱՐԹԱՑ

Դուն գիդիս, ումնոր գուզիս տու: (Նստելով Օսկանի մօտ աթոռի վրայ:) Մէ էրկու հարուր թուման վուր 'ղիմիշ անիս, առուտրի տղայ էլ լաւը կու ճարինք:

ՕՍԿԱՆ

Վո՜ւր գլխամեռ էտու փքրումը չէ գիփ. ամա վուր չէ ըլում ջեր, ինչ վայ տամ 'ես իմ գլուխը:

ՄԱՐԹԱՑ

Էսէնց մէ ինչ դժար ճարելու է քիզ համա էտ փուղը:

ՕՍԿԱՆ

Ա՛ կնիկ, դուն հէսաբ իսկի չիս գիդի. էրկու հարուր թուման վուր փուղ տամ, հիմի փալաս է, փուլաս է, շալիր է, էլի ինչ զա՜հրումար է իմ գլխին. էս 'երիք հարուրն էլ կու անց կենայ, իժում մինք ինչով ապրինք:

ՄԱՐԹԱՅ, տանուած:

Հաղբը ասխ, վուր մխչկատ համա փուղ չիս 'ղիմիշ անո՞ւմ:

ՕՍԿԱՆ, բարկացած, տեղից վեր կենալով:

Հա՛, 'ղիմիշ չիմ անում, ձեռը չիս վիկալնի՞:

ՄԱՐԹԱՅ, նոյնպէս:

Բաս վի՛կալ ու մէ հաց թխողի տու, քու ասածի մարթ իս, ախար է:

Զայրացած դուրս է գնում յետ դռնից:

## ՏԵՍԻԼ Է

ՕՍԿԱՆ, մենակ:

(Ծաղրելով:) Բըըը՜... (Սրտով խաչակնքելով:) Տէ՜ր օղորմած Աստուա՛: Տօ՛, զարմանք կնիկ է էս իմ կնիկը. էրկու հարուր տու, 'երեք հարուր տու, հէնց գիդենաս միլիօն ունենամ: (Այս ու այն կողմը երկնքում նայում է:) Աստուա՜ գիդենայ, դիփ ինձ համա էրկու հարուր թուման մայա չունիմ. ամա էս թաքուն ձիգ իմ ասում, օչովու չասիք, թէ չէ տունս կու քանդվիլ: Դուքանս լիքը վուր տեսնում ին, 'հէնց գիդին դիփ իմն է: (Երբեմն ձեռ է տալիս, երբեմն կանգնում:) Քանի տէր ունէ ապրանքս, էն 'ես գիդիմ: Է՛'ստի առ, էնդի տու. սրա՛մէն (Աջ ձեռքը աջ կողմն է ձգում:) վիկալ, նրա բե՛րանը (Աջ ձեռքը ձախ կողմն է ձգում:) ծածկէ. սո՛ւտ ասա, դո՛ւրթ ասա, անջախ-անջախ ծէրը ծէրին (Երկու ցուցամատի ծայրերը միացնում է կպցնում:) վրայ իմ բերում: Ախար (Ձեռքերը առաջ է բերում:) ո՞վ կու դիմնայ հիմիկվան ապրելուն: Էս պիտի ու էն պիտէմէն զահլէս գնաց: Ափսուս չէ՞

վաղուցվան ժամանակը, վուր ամեն մարթ իր չափս ու ձիւը գիդէր: Հմա, էն վաղ էր, վուր էշը կաղ էր: Էս մօղէքը խօմ (Իր հաստ փորը ցույց տալով:) ճլէրք գցեցին ինձ էլի... Տօ, էրեգ մէկէլ օրը իմ սարսաղ կնիկը վիկալաւ ու թագա բուռնուսի փիշիքը ծակծըկից. (Կանացի ձայնով:) պիտի առչիւը ջիբիր ունենայ, կօսէ: (Իր ձայնով:) Ի՛նչ է՝ ձեռնիրն էսէնց դարսէ մէչն ու (Շարժուածքով ցույց է տալիս:) տիտրին, տիտրին (Ծաղր անելով նման է տալիս:) ման գայ: Արի հիմի ու ախչիկ էլ մա՛րթու տու: Ա՜խ, բաժինք մօզօնա՛ղ, էն կինքումն էրվիս, վունցոր 'ես էստի իմ էրվում: Ի՞նչ անիմ, ի՞նչ ջուրը նըընգնիմ. վո՞ւրդի ճարիմ մէ էրկու-'երիք հարուր թումանն: (Մտածմունքի մէջ է ընկնում:) Առուարի խէրն էլ գնաց. էլի թէ մէ էրկու չայի ճարվում է, էն էլ փօղըրթներումը. ամա ինձ փօղրաթն ո՞վ է տալի: Ա՛խ Աստուա՛ծ, Դուն էլ դիփ հարուստներուն իս օտկում. մէ միր կուռն էլ դէ՛վէր մտիկ տու է՛: (Նստում է տխուր:) Ա՜խ, բա՛ժինք մօզօնող, կինծիտ կտարվի: (Շարժուածքով նշան է անում, որ զանազան բաներ է մտածում:) Է՜հ, չէ... Կո՞ւլի ըլլի... Չէ, էս էլ չէլաւ... Հըմ... հա՛... (Յանկարծ ուրախ վեր է թռչում և ձեռներն խփելով:) Ախմա՛խ, ախմա՛խ. տօ՛ էլ ի՞նչ իմ հիռու ման գալի. ա՛յ հաու թրեաթրը. արի՛, չալիշ գամ, իջարով վիկալնիմ. մէ էրկու հարուր թուման վո՞ւնց չիմ դադի: Էստու վրայ լաւ փօղրաթ կուլի՞. էլ վունց գալօգ գուղէ, վունչիչ: Մէ Արութինին կանչիմ. նա էստունց ճամփէն ուփրօ լաւ գիդէ: (Կանչում է:) Քիտէսա՛վ, բիճօ: (ქიტესავ, ბიჭო! — Քիտէսի, տօ:)

## ՏԵՍԻԼ Ը

### ՕՍԿԱՆ, ՔԻՏԷՍԻ

*ՕՍԿԱՆ, Քիթէսին, որ ճամբան է խորէն դառնէր:*

*Բիճօ, չէմ դուքնիս գվէրդիթ, րօմ ախալգազդա բիճի զիս, իցլ՞ի:* (ბიჭო, ჩემ დუქნის გვერდით, რომ ახალგაზდა ბიჭი ზის, იცი?. — *Տօ, իմ դուքնի կշտին վուր ջէհէլ տղայ կայ նստած, գիդի՞ս:*)

ՔԻՏԷՍԻ

*Ռա՛վա արա, շէնի ճիրի մէ:* (რავა არა, შენი ჭირი მე. — *Վի՛ւնց չէ, շարդ տանիմ:*)

ՕՍԿԱՆ

*Ցուշին րօմ շէնթվիս սախալուխէ մօվաճրէվինէ:* (ბუშინ რომ შენთვის სახალუხე მოვაჭრევინე. — *Էրէգ վուր քիզ համա ախալուխացու կտրիլ ավի նրան:*)

ՔԻՏԷՍԻ

*Կի՛ բատօնօ, կի՛ բատօնօ:* (კი ბატონო, კი ბატონო! — *Հրա՛միլ իս, պարուն, հրա՛միլ իս:*)

ՕՍԿԱՆ

*Ախլաւ չաիրբինէ դա ութխարի, րօմ աք մօբձան-դէս. ձալիան սաճիրօ սաքմէ մաքվս, թքօ: Մա՛լէ, ջեր դուքանի ար էքնէբա դակէտիլի:* (ახლავ ჩაირბინე და უთხარი, რომ აქ მობძანდეს; ძალიან საჭირო საქმე მაქვს, თქო. მალე, ჯერ დუქანი არ ექნება დაკეტილი. — *Հիմիսկէվէտ դէվէր վազի ու ասա՛ նրան, վուր էստի շնուր բերէ. խիստ հարկաւոր բան ունիմ, ասա՛: Զո՛ւտ, ջեր դուքանը չի ունենա կոխպած:*)

ՔԻՏԷՍԻ

Ամ ծուլթչի, չէնի ճիրի մէ։ (ამ წუთში, შენი ჭირი მე. — Հիմիսկէվէտ, չարդ տանիմ։)

Գնալու փութում է։

ՕՍԿԱՆ

Ա՛յ, զա՛հրումար... Էրթից, բի՛ճօ։ (აი, ზაჰრუმარ!.. ერთიც, ბიჭო! — Ա՛յ, զահրումար... Մէ՛կ էլ, տօ՛։)

ՔԻՏԷՍԻ

Մէտի արղա մէցխինկվէրա, ա՛ղա ջան։ (მეტი არღა მეცხინკვება, ალა ჯან. — Էլ չէ գալի փռշտալս, ա՛ղա ջան։)

ՕՍԿԱՆ, Բերտեցու գլխին խփում է։

Մէ չէն գէուբնէրի, էրթս նու դաացէմինէբ, թօ-րէմ մօգկլամ։ Ծա՛դի, մա՛լէ, շէ վի՛րօ։ (მე შენ გეუბნები, ერთს ნუ დააცემინებ, თორემ მოგკლამ. წადი მალე, შე ვირო! — 'Ես քիզ ասում իմ՝ մէկ մի՛ փռշտեցնի, թէ չէ կու սպանիմ։ Գնա՛, շո՛ւտ, ա՛ւանակ։)

Բերտեցին դուրս է փախչում խորքի դռնից։

ՏԵՍԻԼ Թ

ՕՍԿԱՆ, մենակ։

Ա՛յ, քու տո՛ւնն Աստուծ քանդէ։ Է՛ս սաբրը լաւ չէլաւ. ամա գի՛շերով խէր է, ասում ին... Հա՛յ-թէ լաւ բան միտս էկաւ։ Հիմի խալխը 'ղնամիշ կօնէ ինձ. կօսին՝ թէ հաւ թրախթըր ի՛նչ նրա խի՛լքի բան է։ Տօ՛, էստուրն ի՛նչ խիլք գուզէ. խաղողը կու խաղայ, 'ես փուղերը ջիբս կօծիմ։ Կօսին՝ Օ՛սկան Պետրովիչ, էս բա՛նը խաղցու, 'ես էլ ի՛նչ իմ հօքում, էն կու խաղցնիմ։ Հալա մէ լաւ հէսաբ անիմ, հուրը չը

4060-68

նեղնիմ: (Համրիչը մէջ է առնում, նայում ու երեսը հաշխատում:) Վից ու վից՝ տասերկու. քսանուչուրս. քառսունութ. էս հինգ թուման. էս տասը թուման. էս չուրս քսան: Էս'ղանց դուս գանք, ա՛ղա Ջան, քսան մէկ ու տասն էլ մէկ, կու մնայ խուն. խունէմէն դուս գանք քառսուն, կու մնայ տասը: Քսան ջէր տասը, էս քիղ խատակ էրկու հարուր թուման: (Ուրախ մէջ է ընկնում համրիչը ձեռքին:) Դըրուստ խէրի բան է, քո՛ւ արխըը. դադումն աչքալա է: Արա՛, նուր բան ու միր քաղաքը: Էն օրը բիլէթ առնելու էնէնց մօդ էր էլի խալխը, կօսէիր, թէ թաղա գելաքնուր է էկի: Աստուծ գիդենայ լաւ բան մօզօնեցին էս միր ուսում առածնիրն ա՛յ: Ամա նրանք էլ խիստ խիլքին զօռ ին տալի խանդխախան. մարթ իրմէն պլտի կարի, ուրիշին օակէ, կօսէ: Տեսնիմ, թէ ո՛վ է դուռս թըխթըխկեցնում ու ասում թէ՝ Օ'սկան Պետրովիչ, բռնէ էս էրկու հարուր թումանը, ախչկատ մա՛րթու տու: Արա՛, աւտալու է էս հանգի բանը՜: Չէ՛, ձիր արխը, շատ կարթալը գօգրին (Գլուխը ցոյց տալով:) զալար է անում: Հիմի 'ես, վուր ունիվըրստա չիմ էլի, խիլք չունիմ. մէրաշ մէ աքասու մագիէր հինգ շայի չտամ: Է՛հ, մա՛խլաս. էլի Տէրը բարի տայ էս ուսում առածնեբուն, թէ չէ ինձ համա վո՛ւրդի էր բաց ըլում թըեաթըի իջարէն: Ա՜խ, թէ մէ գլուխ էկաւ էս բանը, դո՛ւն մտիկ իժում Փուքսավատօվի հալը: (Ման է գալիս երգելով:) Լամու լամու, թըեաթը լամո՜ւ. լամու լամու, իջար լամո՜ւ. եա՛ր խըթամ: (Աւելի շտապ է երգում:) Հա՛յ-թէ կու խօսին փողոցումը. կօսին՝ տօ, էս անիծած Օսկան Պետրովիչը վո՛ւրդի գթաւ էս խէրի բա-

նը։ Աբա՛, ո՛ւմ խելքումը գու քէր հաու Թըրեաթըրի իջարէն։ (Ծիծաղում է ու ցուցամատի ծայրը ճակատին խփելով:) Փիլիսոփի գօգրա ևս, գօգրա, Օ՛սկան Պետրովիչ։ Հա՛յ-թէ ախչկաս բանը չինվեցաւ։ (Մոտենում է ձախ դռանն ու ձայնում:) Կե՛կել։

## ՏԵՍԻԼ Ժ

### ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ, ներս գալով:

Հա՛մէ։

ՕՍԿԱՆ

Մէ հէնց ապըևս, հիմիսկէվէտ էս օթախը կա՛ըքի բի ու կարտօփիլի մա՛ւմիըը վաւէ։ Էդ շամդանն էլ ուա՛դ աըա։

ԿԵԿԵԼ

'Ղօնաղնիը պիտին գա՛, մա՛մի ջան։

ՕՍԿԱՆ

Չէ՛, մէ տղայ է, հիդը բան ունիմ։

ԿԵԿԵԼ

Ո՞վ է, մա՛մի ջան։

ՕՍԿԱՆ

Տօ՛, քիդ ի՞նչ, ովոր վուը է. դուն բա՛նդ տէս. 'եւ էլ հէնց հիմի գալիս 'եմ։ (Նրթևելով գնում է:) Լամու լամու, Թըրեաթը լամո՜ւ. լամու լամու, իջար լամո՜ւ. եա՛ր խաթա՛մ։

Դուրս է գնում ձախ դռնից:

## ՏԵՍԻԼ ԺԱ

ԿԵԿԵԼ, *մենակ։*

Հէլա ինչ ուրախ է. շատ վուխտ է խաղ չէ ասի։ (*Սենեակը մթնի բերելով։*) Իմ դէդի փայն էլ ինչ լաւ դուս էկաւ. մէրաշ հէնց դու քայ, վուր դուն էլ չի-մանաս, կօսէ։ Է՛րնէկ, ո՜վ պիտի գայ։ Հիմի վուր էրա-զըս կատարվի. միթամ մէ սիրուն տղայ ասում էր հօրս, վուր քու ախչիկը մուքթ ուզում իմ, կօսէ, ու մէրաշ ինձ նշնեցին... Աբա դմըդը կորվի է հի-միկվան տղերանցը՞. օղունդ փո՛ղ ասա նըրանցը, թէ-գուզ ախչիկը քաշալ ըլլի։ (*Իջում։ Խօսելը վերջանում է, ծրագրան հանգցնում ու աշտանակը լուցնում, յետոյ հայելու մեջ նայվում։*) Ի՛նչ ուրախ ի՜մ. էլախտվան խաղը լա՛ւ խաղ է, մ՜յ։ (*Ծոցից հանում է մի ծալած թուղթ։*) «Ա՛խ դիլաւ, դիլաւի» ձէնի վրայ է ասած։ (*Երգում է. տաղանդաւորները ածում են հետը երգի եղանակը։*)

«Հայոց աղջիկնե՛ր, ձեր հո՛գուն մատաղ.
«Երբ միտս էք գալիս, ասում եմ ես՝ ա՛խ.» ևայլն։

*Երգը աւարտում է և նորից հայելու մեջ նայվում։ Այդ միջոցին Օսկանը ներս է մտնում ձախ դռնից։*

## ՏԵՍԻԼ ԺԲ

## ՕՍԿԱՆ. ԿԵԿԵԼ

ՕՍԿԱՆ

Տօ, էտէնց իս կարքի բերում օթախը՞։

ԿԷԿԷԼ

Դիփ սարքեցի, մա՛մի ջա՛ն. արա՛ մտիկ, ի՞նչն է պակաս:

ՕՍԿԱՆ

Գնա՛, լաւ է, դէդիդ ծակէ էնդի:

Կէչէլը դուրս է գնում ձախ դռնից:

## ՏԵՍԻԼ ԺԳ

ՕՍԿԱՆ, մենակ:

Տօ́, էս հալիլէն վուր չըլի, ի՞նչ պիտին անի ախչըկիրքը. է՞հ, իժում ուրիշ բան կու մօղօնին: Ամա իջարէն գլխէս չէ դուս գնում, չէ. քանի շատ իմ փիքր անում, էն'ղադա դադումը շատանում է... Ասում էի՝ էրկու հարուր թումանն կու դադրի՛մ: Էրկու հարուրն ի՞նչ. բարաթ-բարաթ բանիր է պտուտ գալի մտկումըս: Մէկ էս վուր՝ հաու թրեաթրի համա ինչ հարկաւուր է, վուր առչիւը վաթսուն հոքի նեմէնցու մուզիկանտնիր ըլին նստած ու տիրու-տուրա՛ւ, տիրու-տուրա՛ւ բանիր ըլին ածում. ուփրօ լաւ չի ըլի՞, վուր մէ էրկու դաստա դուդուկչիք ըլին նստած էնդի ու լա՛ւ սահարի, ռաստ, հէյդարի, նաղմ, մաւարան, մուխամբաղ ըլին ածո՞ւմ. էս ուփրօ կու դուր գայ խալխին, համ էլ չուրս ջէր էժան կու նստի: Մէկ էլ էս՝ վուր դիփ սորված տղերք չմօղանիմ խաղալու համա, բաղաղխանի տղէրքը նրանցմէն պա՛կաս կու խաղա՛ն: Մէ գայ էն ճարտարօվը: (Նայում է ծոցի ժամացոյցին:) Յօրէս ութը կու թամամի: Ինչի՞ ուշացաւ հէր օխնածը: Ա՛յ, իմ խարջ տղայ. բըլբուլ է,

*բլբուլ, դրուստ։ Թէ մէ էրկու հարուր թուման աւելի կունենամ, ձեռնէմէս չիմ թողնի, ամա վուրդի է էս սահաթիս։ Ա՛խ, բաժինք մօզօնող, Սաթաէլի չանգերով պատուավիս։*

Կեչեչը ներս է մտնում խորքի դռնից։

## ՏԵՍԻԼ ԺԴ

### ՕՍԿԱՆ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ

*Մա՛մի ջան, մէ ինչոր տղայ է հարցնում քիդ. ասում է՝ Արութին ճարտարօվն իմ, կօսէ։*

ՕՍԿԱՆ, ուրախ։

*Ա՛սա գայ, ա՛սա գայ, ’ես էլ նրան իմ մնում։*

ԿԵԿԵԼ

*Ա՛րի, մա՛մի ջան, դո՛ւն ասա. բիջը ջեր չէ յիդ էկի, ու դէդէն էլ սարդըփումն է։ Մէկ խօսեցայ էն տղի հիդ, հէնց գիդէի՝ ամուլթու գեդինը մտայ։*

ՕՍԿԱՆ

*Տօ՛, գնա՛ ասա՝ համեցէք իմ ասում Է՛. գէլ խօմ չէ՛, վուր կուլ տայ. իժում չայ էլ կու բերիս միզ համա։*

Կեչեչը դուրս է գնում խորքի դռնից չախչուրները ուղղելով։

## ՏԵՍԻԼ ԺԵ

ՕՍԿԱՆ, մենակ։

*Տօ՛, ղալմանք խալխ է էս միր խալխը. Փանդըրմու ամեն մօղէքը սարվեցան ու քաղաքավարու-*

թինը չէ։ Թէ ամուլթէմէն շատ ին քաշվում, էն կըրնօլինէմէն ամանչին, վուր հէնց գիդենաս շուրտվանց բզըխալէք ըլի՛ն։ (Ցէտ է նայում։) Էս ի՛նչ էլան... մէ տեսնիմ... (Դուրս նայելով խորքի դռնից։) Դիվիր է գալի։ (Վերցնելով իր վերարկուն։) Էս էլ էսալի է թողի...

Շտապով դուրս է գնում յետ դռնից, ձախ խորքում երևում են՝ առաջ Կէչէլը, յետոյ Արութինը։

## ՏԵՍԻԼ ԺԶ

## ԿԷԿԷԼ, ԱՐՈՒԹԻՆ

ԿԷԿԷԼ

Համեցէք։ (Այս ու այն կողմը նայելով։) Ցօրէս մամէն գու քայ, էստի մուլափ աուէք։

Արութինը ելնում է տակից, Կէչէլը դուրս է գնում յետ դռնից։

## ՏԵՍԻԼ ԺԷ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ։ Փոքր լռութիւնից յետոյ։

Ա՛խ, ի՛նչ սիրուն է։ Իմացիլ էի վուր լաւ ախչիկ է, ամա չէի գիդի, թէ էսէնց անտիկա է։ (Առաջ գալով։) Զէնը դըրուստ սրտումս նստեցաւ։ Էնդուր էլ դիփ ասում էին ինձ՝ թէ կնիկ գուզիս, կօսէ, սրա հանգի ախչիկ չկայ քաղկումը, կօսէ։ Ա՛խ, ’ես սրա հոքուն մեռնիմ, բօյին շիմշատ ըլի հէնց գիդենաս։ Ամա էրանի գիդենամ, թէ էս Օսկան Պետրովիչն ո՛ւր է կանչի ինձ... Թէ բան ունէր, ինչի՞ փողոցումը չասաւ։

Օսկանը մտնում է յետ դռնից։

# ՏԵՍԻԼ ԺԲ

## ՕՍԿԱՆ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

*Բարիգուն, Օ՛սկան Պետրովիչ:*

ՕՍԿԱՆ

*Օ՜հ, բարով, պարոն Արութին. ինչի՞ ուշացար:*

ԱՐՈՒԹԻՆ

*Դուքանս, խօմ գիդիս, ուշ իմ կոխպում... (Մէ-ջքոյ ցէւ էն տալիս:) Ի՞նչ հարկաւոր բան ունիս:*

ՕՍԿԱՆ

*Ա՛յ, արգ անիմ, ախպէր. (Հրաւիրելով նրան դէպի դի-վանը:) համեցէք նստի... (Արուէթինը պատրաստվում է դիվանի մօտ դրած աթոռի վրայ նստելու:) Վա՛, դի՛վանի վրայ համեցէք:*

ԱՐՈՒԹԻՆ, նստելով նոյն աթոռի վրայ:

*Դիփ մէկ է, Օ՛սկան Պետրովիչ, էսէնց էլ լաւ իմ:*

ՕՍԿԱՆ

*Քու քէփն է... (Նստում է աթոռի վրայ:) Մէ լաւ բան իմ գթի, պիտիս օտկի, Ա՛րութին ջան. քու լաւութինը կու վջարիմ:*

ԱՐՈՒԹԻՆ

*Ջա՛նըմ ասկիս. ի՞նչ ’ղուլուղ կայ. հրամայէ, Օ՛սկան Պետրովիչ:*

ՕՍԿԱՆ

*Մէ ւնսա, լաւ բան մօղա չէկա՞ւ հաու թրեաթրը:*

ԱՐՈՒԹԻՆ

*Հալբաթտա, ասկի պայծառութին է:*

ՕՍԿԱՆ

Հա՛, ամա մարդ վուր ուզենայ՝ խէր կու տեսնէ էս բանումը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Ի՞նչ է ասում։ (Օսկանին։) Վո՞ւնց թէ խէր կու տեսնէ. չիմ իմանում, Օ՛սկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Գիդե՞ս ինչ է, ախպէր. ’ես ուզում իմ հաու թրեաթրը իջարով վիկալնի։ Խէրի բան է, գա՞նա։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Գժվիլ է՞։ (Օսկանին։) Հանաք իս անո՞ւմ, Օ՛սկան Պետրովիչ։

ՕՍԿԱՆ

Հանաք կի չէ, դուրթ իմ ասում, քա՛ւ ախիւր. քունը սուտ չգիդենաս, իմ ախւրն իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, վեր է թռչում տեղիցն ու առանձին։

Վա՛յ մէ, խիլքէն էլիլ է։

ՕՍԿԱՆ

Վա՛հ, ի՞նչ իս արմնում։ Չիս գիդի՞, վուր ամեն բանումը փուղ կու դադվի՛, օղունդ մարթ ճամփէն գիդենայ։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Քու դա՛ւշմանը. ափսուս Օսկան Պետրովիչ։ Ամա ինչ ախչիկ ունէ՜. ’ես նրա հոքուն մեռնիմ։ (Նստելով, Օսկանին։) Հալբաթտա, ամեն բանումը փուղ կայ, ամա մէբաշ էնդու վրայ արմըցայ, վուր ուրոր գնացի, հաու տրեատր, հաու տրեատր, գլո՛ւխս գնաց էլի՜. էլ օչով վունց բան ունէ, վունց գուրձ։ Բա՛ս խատակ մտկումդ դրիլ իս, վուր իջարով վիկալնի՞ս։

ՕՍԿԱՆ

Իստակ. ու էն իմ հարցնում, խէրի բան է՞ թէ չէ։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Խիղճ մարթ. ախր կօխիմ, թէ խէրի բան է, տեսնիմ, իժում ինչ կօսէ։ (Օսկանին։) Վա՜հ, խէրի բան վուր չըլի, ուր կու մօզօնէին։

ՕՍԿԱՆ, առանձին։

Մտիկ թէ վուրդի է միտկը հասնում։ (Արութինին։) 'Ես էլ էտ իմ ասում. ամա ինչ իս կարծում, միր բաղաղխանի տղերքը, վուր ուզենան, չին կանա հաու թրեաթըր խաղա՞։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին զարմանք է արտայայտում։

Վա՜հ, բաս ինչացու է միր բաղաղխանէն. միր Լա՛զրօվի չկօլէն էլ էն է էլի... Այ՝ Բանբակինց Պետօն, Մահուդինց Սաեպկօն, Զիթումինց Դարչօն, Կանկօինց Միխօն, հիմիկվան խաղացողներու վրայ պակաս չին խաղա։

Առանձին դէմքը ծամածռում է։

ՕՍԿԱՆ, առանձին։

Ի՞նչ ասիս՝ սա գիդէ։ (Արութինին։) Բա՛ս տարէնը մէ քան-եարսուն թուման վուր ունենան, խանդէխան կու խաղա՛ն հաու թրեաթրումը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Խիղճ Օսկան Պետրովիչ։ (Օսկանին։) Վա՛հ ջանենըրուն չի դուս գա՞. եարսուն թումնով 'ես էլ կու խաղամ ո՞ւ։

ՕՍԿԱՆ, վեր է թռչում ու առանձին։

Ա՛յ փուղի 'ղադը գիդացող։ (Արութինին։) Է՞հ, դո՛ւրթ կու խաղա՞ս։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին:

Աւտում է խիղճը: (Օսկանին:) Բաս չիմ խա...

Ձախ դռնից Կէչէլը արծաթեայ սկուտեղով բերում է թէյ և պաքսիմատ:

## ՏԵՍԻԼ ԺԲ

## ՆՐԱՆՔ, ԿԷԿԷԼ

ՕՍԿԱՆ, Արութինին, որ շփոթուելով ոտի է կանգնում, մինչդեռ Կէչէլը առաջարկում է նրան թէյ:

Համեցէք, Ա՛րութին ջան:

ԱՐՈՒԹԻՆ, Օսկանին:

Ձեր հրամանքդ, Օ՛սկան Պետրովիչ:

ՕՍԿԱՆ

Վա՛, վա՛, գէթա՛ղվա... (Արութինը վերցնում է մի բաժակ, ձեռքով տալով Կէչէլին, որ միւս բաժակը տանում է դէպի Օսկանը:) Լա՛ւ, կենայ էտի ստոլի վրայ... (Կէչէլը բաժակն ու պաքսիմատը սեղանի վրայ է դնում: Արութինը աչքը չէ հեռացնում նրանից: Առանձին:) Ի՛նչ խիստ է տնդղում. Թայլին հաւնեցաւ... Կո՛ւլի զուրթ՝ Աստուծ օղորմայ... (Կէչէլին, ցածր:) Մուրաքա էլ մօղ բի, մա՛ս ենդի...

Կէչէլը, դատարկ սկուտեղը ձեռքին, դուրս է գնում ձախ դռնից:

—∞—

## ՏԵՍԻԼ Բ

### ՕՍԿԱՆ, ԱՐՈՒԹԻՆ

ՕՍԿԱՆ, *նստելով։*

*Բաս էտէնց, Ա՛րութին ջան, կա՞ւ խաղաս էլի՞։*

ԱՐՈՒԹԻՆ, *նոյնպէս։*

*Վա՜հ, ինչի՞ չիմ խաղա... Անմիդ անգէմ վուր եարսուն թուման դադիմ, բաս չիմ խաղա՞... Գուզի՞ս, քսան-եարսուն թումնով էրկու հարուր աղայ ճարիմ։*

ՕՍԿԱՆ, *առանձին։*

*Ա՛յ իմ խարջ փեսէն. մխ, փի՜ւղ։ (Արտասուելէն։) Օ՛հ, Աստուած օխնէ քիդ. բանս կու շինվի... Քու մէ օրը հաղար անէ, վուր ինձ էսէնց ուրախացրիր։*

ԱՐՈՒԹԻՆ, *առանձին։*

*Ղա՛ւրթ աւտաց. խի՛դճ մարթ. ախչկան ո՞վ ա՛ի-րութին կօնէ հիմի։ (Օռչալէն։) Թէ բանդ էտու վրայ է, հալբաթտա շինած է։ (Առանձին։) Արի՛ սուտ մէ քանի հանգը խաղամ, տեսնիմ ի՞նչ կօսէ. համ էլ կուլի, ձէնիս վրայ էն ախչիկն էլի էրևայ։ (Օռչալէն։) Արա՝ ո՞ւմ հանգը գուզիս, վուր խաղամ։*

ՕՍԿԱՆ

*Արա՛, հօքուտ մեռնիմ։*

ԱՐՈՒԹԻՆ, *վեր կենալով տեղից։*

*Ա՛յ, օրինակ՝ ասիմ քիդ Դալալ Ղաղօի հանգումը։ (Ներկայացնում է։) «Ա՛խ, իմ օղորմած հօքի բիձա «Կանկօ... Էլ Սադմուսը, Ասմաւուրքը ու դիփ տէր-*

*«տէրնէրու գրիրը, ասում է, փուրումն է:»*) Վո՞ւնց է, նրանց վրայ փիս իմ ասո՞ւմ:*

*Նայում է ձախ դռան կողմը:*

*ՕՍԿԱՆ, առանձին:*

*Վուր ասում իմ՝ բըլբուլ է: (Արութինին:) Փիս կի չէ՛, ուփրօ լաւ իս ասում. ամա էս է վուր Դալալ Ղաղօն հաստ փուր ունէ ու դուն բարակ իս:*

*ԱՐՈՒԹԻՆ*

*Վա՜հ, հէն'ղաղա բալիշ կու դարսիմ փուրիս վրայ, վուր Ալիխանի ուսմրին դառնայ:*

*ՕՍԿԱՆ*

*Հա՜մ... գանա էտունք էլ կա՞յ:*

*ԱՐՈՒԹԻՆ*

*Վա՜, բաս վո՞ւնց գիդէիր:*

*Նոյն դռան կողմն է նայում:*

*ՕՍԿԱՆ, առանձին:*

*Գիդէի վուր շնուքով աղայ է, ամա էսէնց չէի ճանչնա: Ա՛խ, մէ ատելի էրկու հարուր թումանն: (Արութինին:) Բարաքալա՛, Արութին, տեսնում իմ վուր թրեաթրի բանիրը դուն նեքսի ակերէմէն իս գիդացի:*

*ԱՐՈՒԹԻՆ*

*Բաս վո՞ւնց կու ճանչնէիր ինձ: Հիմի գուզիս էն թագաւուրի հանգը՝ սիրեկնի հիդ վուր խօսում է: (Ներշնչայնում է:) «'Ես քիզ սիրում իմ, ասում է, եա՛ր. «ամա թէ դուն ինձ չի՛ս սիրի, 'ես ջուրը կու նընգ-*

---

**) Այս ու հետևեալ երկու տեղ չակերտներով նշանակած խօսքերն ասւած են Գ. Սեդրակ Մանդինեանից, որ առաջին անգամ կատարեց Արութին ճարտարօղլի դերը:*

«Նիմ՝ ասում է. խօ գիդիս վուր 'ես էտԹավուր խա-
«սիաԹ ունիմ՝ ասում է։»

Կըճէն նայում է դառն ժպտով։

ՕՍԿԱՆ, ամաչեն։

Դրուստ կու րուքըէ Թընաթըը։ (Արութինին։) Ա՛խ, սիրտս դաղեցիր էլի… ԼմզզաԹ։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Իմ սիրտն էլ դաղվեցաւ։ (Օսկանին։) Էստու վրայ լաւր-լաւր գիդիմ, Օ՛սկան Պետրովիչ։ (Առանձին։) Արմ Թէ մէկ էլի դուս գայ… ՂուրԹ, լաւ միտս էկաւ։ (Օսկանին։) Ա՛յ, գուզիս, հիմի Սամէլի հանդը խաղամ, իր հէր Վահանին վուր սպանում է։ Դուն էստի կանգնի, միԹամ Վահանն իս։ (Օսկանին կանգնեցնում է բեմի յաջ կողմը եւ նրա յետնափայտը վեր առնում։) Էս ջօ-խին էլ միԹամ իմ Թուրն է։ (Ներկայանում է շատ քաղցր ձայնով փայտը յետեւին խաղացնելով ու հեշտանալով առաջանալով դէպի Օսկանը։) «'Ես քըիստոնայ իմ, ասում է, դուն «Թուրք իս, ասում է. 'ես վուրԹի իմ, ասում է, դուն «հէր իս, ասում է։» (Կէչէնը թաղցրանենով ոչնչացնող յետեւին ձգում է յաջ դռնից եւ շփոթուած խօսքն չէր է դառնում։) «Ամմա դուն, ասում է, իմ ասկս ու հա-«ւատս չիս սիրում, ասում է, բաս մեռի լօԹիանս, «ասում է։»

Օսկանը չէտաւոր թաշուելով մինչեւ տախտը, վերջը վրան վայր է ընկնում. Մարթան ու Կէչէնը դուռն են ընկնում։ Արութինը շփոթուած՝ փայտը յետեւից վայր է ձգում։

—∞—

## ՏԵՍԻԼ ԻԱ

### ՆՐԱՆՔ, ՄԱՐԹԱՅ, ԿԷՉԷԼ

ՄԱՐԹԱՅ

*Վո՛ւյ, քոռանամ ու կուրանամ 'ես. էս ի՞նչ խաբար է:*

ԿԷՉԷԼ, Օսկանին:

*Մամի ջան, մի՛ վախենա, ջօխին ձեռնէմէն վէր գցից:*

Արութինը սիրով լցուած՝ կարօտով նայում է Կէչէլին:

ՕՍԿԱՆ, ծիծաղելով:

*Ա՛յ սալսաղնիր: (Արութինին:) Օ՜հ, չա՛տ ապրիս, Ա՛րութին ջան:*

Ծիծաղից շունչը կտրում է: Մարթան ու Կէչէլը զարմացած նայում են երբեմն Օսկանին, երբեմն Արութինին:

ԱՐՈՒԹԻՆ, Օսկանին:

*Սուտը սուտ է, էլ 'ես առանց սրան չիմ կանա ապրի. հալբաթ իմ բախտն է:*

ՄԱՐԹԱՅ, Օսկանին:

*Քա՛, ահու կինաղամ սիրտս գնաց. մէ ասա՛՝ էս ի՞նչ բան է:*

ՕՍԿԱՆ, Մարթային, շարունակելով ծիծաղը:

*Տօ՛, մէ գլխէմէս ձեռը վիկալ, քու հօրն օղորմի է՛: (Արութինին:) Օ՜հ, ղորանմա՛ս, Ա՛րութին ջան:*

Մարթան ու Կէչէլը զարմացած նայում են միմեանց:

ԱՐՈՒԹԻՆ, Մարթային:

*Հըմ, դէդի ջան, ի՞նչ վախեցար. հանաք էի ա-*

նում. ամա թէ դուրթը գուղիս՝ (Ատամները երեւը խռ-չոնչելով:) ձիս ախչկայ համա լաւ փեսայ իմ ճարի:

Կեչերը խուշոյն դուրս է փախչում ձախ դռնից ու այն-տեղից ծածուկ աչանք դնում:

ՕՍԿԱՆ, տեղից վեր Թռչելով, Արթնելեն:

Ի՞նչ... փեսա՜յ:

ՄԱՐԹԱ, Օսկանին:

Քա՛, էս ո՛ւմն ես տուն թողի, վուր հիմի մաս-խարա էլ է գցում:

ՕՍԿԱՆ, Մարթային:

Մուլա՛փ, դուն հալա ձէն մի՛ հանի: (Արթնելենին:) Ի՞նչ ասիր, ի՞նչ... փեսա՜յ:

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, Օ՛սկան Պետրովիչ:

ՕՍԿԱՆ

Արա՛, էտ լա՛ւութինն արա էլի՛. ո՛վ է, ո՛վ:

ԱՐՈՒԹԻՆ

Մէ ինձ պէս աղայ է. կու տա՛ս ախչկատ:

ՕՍԿԱՆ

Ի՛նչ վուրթին ես, Արութին ջա՛ն... Քի՛ պէսին կու տամ էլ ու կայինքս էլ չիմ խնայի... Ո՞վ է. ա՛սա ու պրծի:

ԱՐՈՒԹԻՆ

Հէնց ’ես իմ, ի՛նչ կօսիս... Ի՛նչ կու տաս, քու քէփն է:

ՕՍԿԱՆ

Ղո՛ւրթ:

ԱՐՈՒԹԻՆ

Իմ արևը գիդենայ, դուրթ իմ ասում:

ՕՍԿԱՆ, վրայ ընկնելով։

Քու հոգուն մեռնիմ, փեսայ ջան, (Փաթաթվում է ու համբուրում։) մայրիդ քիզ կու սիրէ ու Աստուած էլ քիզ ինձ էրիտ... (Կանչում է։) Կէկէլ, Կէկէլ... (Կէչէլը երևում է յափ դրան շեմում. Օսկանը յետոյ բռնում է ու մօտեցնում Արութինին։) Հըմ, վա՛րթի, Աստուած ձիզ միասին ծիրացնէ։ (Արութինը համբուրում է Կէչէլին։) Բարի սահաթի ըլի, վա՛րթիկ. Աստուած անփօշիմնելի անէ... Վուխչ իմ կայինքը ձիրն է ու ձիրը... (Ասպայէն։) Ա՛յ լօթիանս բա՛ն... (Ձեռքերը բարձրացնելով։) Գուհանամ Քի, Տէր, ադանչաքս լսեցիր... (Մարթային, որ զարմանքով նայել է բերանաբաց։) Վա՛հ, ինչ ես էտի ցից էլի. տó, արի օխնէ է։

ՄԱՐԹԱՑ, Օսկանին։

Ախար մէ չես ասի՝ ով է։

ՕՍԿԱՆ, Մարթային քաշելով Արութինի կողմը։

Տó, արի օխնէ իմ սսում է. խիստ լաւ տղայ է. գնա՛ ու գնա՛, Մա՛րթայ ջան։

ՄԱՐԹԱՑ, Օսկանին։

Ա՛սանց ինձ նշնեցիր էլի՞. քու սածի մարթ ես, ախար է... (Արութինին։) Արա՛, վա՛րթի, նշա՛ն, նշա՛ն։

ԱՐՈՒԹԻՆ, իր մատանին տալով Մարթային։

Համեցէք, դէդի ջան, ու էքուց լաւ նշան կու բերիմ։

ՕՍԿԱՆ

Հա՛, էքուց սաղ բաղաղխանէն պիտիմ Օրթաճալա ՚զօնաղ անի բաղումը. ՚ևս նրանց հոգուն մեռնիմ, դարդիմանդ տղերք են։

Արութինը յետամփոփայը մերցնում, մի կողմ է դնում ու այնուհետև Կէչէլի կողքից այլևս չէ հեռանում։

ՄԱՐԹԱՅ, *առանձին:*

Քա՛, իմ փալը կա՛ւղիան էր... (*Մարթան դառնալով Կէքէլէին նայում:*) Շնահաւոր ըլի, Կէկել ջան... (*Համբուրվում են: Յետոյ դիմելով և Արութինին:*) Բախտաւոր ըլիք, վա՛ւրթիք. ըմըրով կշտանաք. Աստծու օխնանքն ըլի ձիզ վրայ...

ՕՍԿԱՆ

Ամի՛ն:

ԱՐՈՒԹԻՆ

Ձի՛զմում, իմ մէր... (*Մարթան համբուրում է Արութինին, իսկ սա — նրա ձեռքը:*) Ձիր օխնանքն անպակաս ըլի միզմէն. Օսկան Պետրովիչին սաղ ունենանք... Հէստի պահիմ սրան, իմ մէր, վունցոր իմ աճկի լուսը. դուք մըխայլին կացէք:

ՄԱՐԹԱՅ

Սէր ու միաբան պահէ ձիզ Աստուած... Կա՛մարկա-տարն ըլի ձիր քօմագը...

*Մի քանի վայրկեանից յետոյ շտապով մօտենում է յուր դարանը, այնտեղից դուրս հանում սեղանից իբր թէ մէկին հրամցնում է տալիս և շտապով վերադառնում:*

ՕՍԿԱՆ, *նոյն միջոցին:*

Քու պարդիմանդ սրտին միռնիմ, Արութին ջան, փեսայ ջան... Ա՛րի, լօթիանա մէկ էլի պռօչաի անինք... (*Համբուրվում են:*) Կէկել ջա՛ն... (*Համբուրում է Կէքէլէին, սա — նրա ճակատն ու ձեռքը:*) Ա՛պրիս... Աստուած տայ ձիզ, ինչ իմ սիրտը գուզէ... Դուն գիդիս, վա՛ւրթի, յօրէսի դէնը... Վա՛, նստեցէք է...

*Նստում են՝ Կէքէլէն և Արութինը դիվանի վրայ, իսկ Մարթան — մօտի աթոռի վրայ:*

## ՏԵՍԱՐԱՆ ԺԲ

### ՆՐԱՆՔ, ՔԻՏԷՍԻ

ՕՍԿԱՆ, Քիթէւոսն, որ յետ դռնից ներս է սուրալով տանդրուեցինը, մեջ և խոլոր բոլոր պարագաներով:

Արքէլ... (Ծქეთ... — Էՙսթէնը...) (Քիթէւոսն սուրալով ընկնում է սեղանի վրայ և ածում է նրան աջ ձեռքը:) Համեցէք, Արսաւթին ջան... (Արուսեակը վերցնելով տանդրուեցին, փոխեց ափսէով տալիս է Կէչէլին, որ շատ ուղեւում է. ... ... շտապում է բաժակները:) Էս ձիր կինայը... (Բաժակը բարձրացնելով:) Կինօք ըլիք, վուրթիք... (Արուսեակը, Կէչէլը և Մարթան ոտքի են կանգնում, վերցնելով մի-մի բաժակ:) Անհատ ու անպակաս անէ Աստուծ Իր օղորմութինը ձիղ գլխունիտ վրայ...

Բաժակը դատարկում է նաև մեկի ծողովուրդը:

ՄԱՐԹԱՅ

Էրգար օր ունենաք, վուրթիք. արժանի ըլինք ձիր թագին ու փսակին...

ՕՍԿԱՆ, մինչդեռ Արուսեակը և Կէչէլը շատ ուղեւում են:

Աստծով...

Ամենքը խմում են միմեանց կենացը. Կէչէլը բաժակը միայն մօտեցնում է շրթունքներին: Յետոյ Մարթան, Կէչէլը և Արուսեակը կրկին նստում են իրանց տեղերը:

ՔԻՏԷՍԻ, նոյն միջոցին, առանձին:

Ամգէնս քալի քէ ղոունիշնավթ. թու ախլայ էրջէր գամայխինկյա, ցէմիթ գամբէյրավս էս օջախ գաքցէուլի: (Ծმგენს ქალი ქე დოუნიშნავთ; თუ ახლაც

ერჯერ დამაცხონკვა, ცემით გამბერავს ეს ოჯახ დაქცეული! — *Մրանք էս է ախչկան նշնիլ ին. Թէ հիմի էլ մէ ջէր փուշաայլի, ծեծելով կու ապանէ ինձ էս տնաքանդը։)* *)

Դուրս է փախչում խորքի դռնից և այնտեղից ծածուկ նայում։

Ներս անցած փախչում է։

*ՕՍԿԱՆ,* շուտ գալով դէպի Բեթխոան։

*Օ՛հ, խէր էկաւ։* (Բեթխոան։) *Խվալ էրթ կարգ չօխաա պաչուքէր, ընճօ։* (ხვალ ერთ კარგ ჩოხას გაჩუქებ, ბიჭო! — *Էքուց մէ լաւ չօխա կու բախշիմ քիզ, աճ։)*

Ցէտ շուտ է գալի Արաուէլոսի ջաղից ու ցածր խօսում նրա հետ։

*ՔԻՏԷՍԻ,* առանձին։

*Ի՛իմէ, էս ըա քվէ՛ղանա 'ղօփիլա. ա՛զվիլի ամփըօ գօուզխ կայս, վինէմ մարթալի։* (Ոიმე, ეს რა ქვეყანა ყოფილა: ტყვილი უმფრო გოუდის კაცს, ვინემ მართალი! — *Վա՛յ մէ, էս ինչ աշխարհք է էլի. սուտն աւելի է ձեռք տալի մարթուն, կանց դուրթը։)*

Ըլլի մի ժամի անգամ փաշտալով, դուրս է գնում խորքի, և այլն։

---

*) *Այստեղ բաց է թողնվում հետևեալ կտորը, որ տպուած էր առաջին հրատարակութեան մէջ և որ առանց որևէ նշանակութիւն ունենալու գրուածքի մտքի համար, ի զուր տեղը դանդաղացնում է գործողութեան ընթացքը։*

(Ծոցից [illegible] [illegible] է հանում ու ծամում, [illegible] ուրախ-ուրախ [illegible] են իրար հետ, [illegible] [illegible] և [illegible] [illegible]. Կէչէն է մնայն շուտ ու անշարժ։) *Էս քէ ըիձիամ մասծայլա։* (ეს ქე ბიძიამ მასწავლა. — *Էս իմ բիձէն սովեցրուց։)*

ԱՐՈՒԹԻՆ, (Ուշադիր։)

Արա՛, հիմի, իմ հէր, արևատրի իջարի վրայ ինչ ես ասում։

ՕՍԿԱՆ

Էա էքուց կու խօսինք կանանչ ու նարգիզ չարխէյիմնումը սէյիր անելիս... Մէ ճաշ սարքիմ էնդի ձիգ համա գուլարի սանձի տակը, մէ ճա՛շ զուռնով ու դուդուկով, վուր — ա՜նաիֆօնի... Ա՛փսուս վուր վարթ մանուշակի վախտն անց կացաւ. ամա ումիկ ունիմ՝ էլի յաւ քէֆ անինք... Հիմի չէր մէ լէզգիվար խաղանք ձեռաց... (Առանձին։) Տօ՛, իմ իջարէն իմ ախշիկն էր. Թրեաթրի մօգօնողին էլ ինչ ասիմ... (Արսենին ու Մարթային։) Արա՛, մէ ամա՛նի խփիցէք, ուզում իմ խաղա... (Սազանդարներն ածում են դուրս կողմանը։ Պարում է։) Վուրն էլ էքուց Օ՛րթաճալա թամաշա արէք... (Դէպի ժողովուրդը։) 'Ե՛ս վուր ասի՝ «Գիշիրվան սաբրը խէր է»։

Ամենքը շարքով դուրս են գալիս։

ՎԵՐՋ

# ՆՇԱՆԱՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Երես: | Տող: | Տպուած է: | Պէտք է լինի: |
| --- | --- | --- | --- |
| 9 | 7 վերեւից: | քա՛: | քա՜: |
| 10 | 6 ներքեւից: | ողորմի: | օղորմի: |
| 12 | 9 վերեւից: | ՄԱՐԹԱՅ | ՄԱՐԹԱՅ, տեղից վեր կենալով: |
| 14 | 4 « | էրեգ | էրէգ |
| « | 2 ներքեւից: | բիճó: | բիճօ: |
| 20 | 5 վերեւից: | գէգիգ | գէգիա |
| 22 | 1 ներքեւից: | ե | ե |

20000[illegible]